ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ N 84

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 39-Ա որոշման պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Արմինե Անուշավանի Հարությունյանի կողմից լիազորված անձ Վարդգես Սամվելի Հակոբյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնք, Երևան-Սևան մայրուղի, թիվ 12/6 հասցեում գտնվող, քաղաքացի Արմինե Անուշավանի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 07-062-0016-0063/ 0.0148 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

20 17 թ. սեպտեմբերի 19
գ.Վերին Պտղնի